ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1

N ՇՀԱՊՁԲ-7/11-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N 4 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ

ք. Երևան 25.12.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Ավանգարդ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խալաթյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 25.02.2016թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/11-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 կետը, 13.02.2018թ. կնքված N 4 համաձայնագիրը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջները՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Քանի որ սույն պայմանագիրը և N 4 համաձայնագիրը 7384.25 կգ «հալած պանիր» ապրանքատեսակի մասով հնարավոր չի լինելու կատարել 2018թ. ընթացքում, ուստի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում և 13.02.2018թ. կնքված N 4 համաձայնագրին կից վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ նախատեսելով 13 284 265.75 (տասներեք միլիոն երկու հարյուր ութսունչորս հազար երկու հարյուր վաթսունհինգ ամբողջ յոթանասունհինգ) ՀՀ դրամի չափով կանխավճար՝ հաջորդ բյուջետային տարվա ընթացքում պայմանագրի կատարման դեպքում ֆինանսավորման խնդիր չունենալու նպատակով:

1.2 Կանխավճարի տրամադրումը լիազորված մարմնի կողմից սույն փոփոխությունը հաշվառվելուց հետո՝ 3 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 27.12.2018թ. ներառյալ: Կանխավճարի մարումն իրականացվում է մատակարարված ապրանքին համամասնորեն: Մատակարարման արդյունքում հաշվարկման ենթակա տույժերը Վաճառողը պարտավոր է վճարել ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ավանգարդ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ԼՂՀ ք. Մարտունի, Լ. Պետրոսյան 31
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1150014471070100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 90213015
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ա. ԽԱԼԱԹՅԱՆ